2 սեղան յանուն Ս. Լուսաւորչի և Ս. Կարապետի, և զերրորդն որ անկանէր 'ի վերայ ճանապարհի Գիւտ Խաչին, քակեալ են Լատինք, որպէս և զայլ տեղիս Հայոց։

Տեղիքն Ցունաց զոր նորոգեցին. Տաճարն, զոր ինքեանք կոչեն Աչխարհամատրան, զընդհանուրն մասնաւորելով. Գողգոթայն՝ միայն տեղին Խաչելութեան, չորրորդ բանտն Քրիստոսի, զեկեղեցին Կոստանդիանոսի. իսկ մեծ աշտարակն, որ էր յառաջագոյն զանգակատուն, տերեալ մասամբ իւիք 'ի Սալահատտինէ, կարի բարձր չինեալ 'ի վերայ չորից դատիկոնաց, այլ ոչ էր հրաման նորոգել զայն, զի պէտս ունէր մեծի ծախուց. և 'ի հրովարտակին քակել հրամայէր զերկոսին հարկս, սակայն և այնպէս թողին զայն որպէս եւ էրն յառաջագոյն եւ զկնի ժամանակաց կախեցին անդ Ցոյնք զանգականիս։

Բաժինք Լատինաց. մեծ գմբեթն տաճարին վայտակերտ ծածկեալ կապարաւ, և արձակ շրջանակն 'ի ներքոյ նորին մինչեւ 'ի գլուխս սեանց եւ կամարաց. բարձրութիւն գմբեթին 7 կանգուն և 9 մատնաչափ. 11 կամարքն՝ որք կոչին Կամարք Խաչի. 5 կամարքն 'ի նոցանէ, որք էին 'ի ներքոյ սենեկաց Խանէ կոչեցեալ մենաստանին այլազգեաց, և 15 սենեակք 'ի վերին և 'ի ստորին յարկի նորին. փոքր եկեղեցին Լատինաց՝ 'ի կողմն հիւսիսոյ յատակեցին հասարակ սալիւ, քակեալ զմիւսիոնն առաջին. ըզշրջապատ յատակս Գերեզմանին, եւ զհրապարակն կամ դահլիճն առաջի նորա յատակեցին հասարակ քարիւ. մինչ յառաջագոյն գոյնզգոյն միւսիոնով զարդարեալ էր. զԱյրն Գիւտի Ս. Խաչին, 'ի Գողգոթա տեղի Տարածմանն միայն, և զերկոսին կամարսն. զվերին և զստորին յարկս, 7 կամարք Ս. Կոստէն կոչեցեալ. և ոմանց 'ի մարմարիոն սեանց ընասելոց ագուցին երկաթի շրջանակս։

Բանզի Մելիք Սալահատտին 'ի տիրել քաղաքին Երուսաղէմի՝ զպատրիարքարանն Լատինաց կից Ս. Յարութեան, որոշեալ կարգեաց զայն 'ի մզկիթ, անուն եդեալ Նմա Խանքէ, և չինեաց անդ այլ եւս սենեակս 'ի բնակութիւն այլազգեաց, ուր եւ յետոյ ամ ըստ ամէ այլք եւս չինեցին սենեակս մինչեւ 'ի վերայ կամարաց եւ մեծի շրջանակի գմբեթի եկեղեցւոյն։ Եւ զի անհնարին էր նորոգել